ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/35

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Նաղդալյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7253-2019 գրությամբ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 23.04.2019թ. թիվ 01/61-7397 գրության հիման վրա, 02.05.2019թ. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 23.04.2019թ. թիվ 01/61-7397 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/18» ծածկագրով կազմակերպված գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով ծանուցել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ խնդրում եմ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2 րդ կետով սահմանված դրույթը:»:

3. <u>«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.05.2019թ. գրությամբ դիմել է «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7253-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերության ներկայացուցիչը մասնակցելով նիստերին բանավոր կերպով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/18» ծածկագրով կազմակերպված գնման Ընթացակարգին մասնակցել է «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում, ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին համապատասխան ներկայացրել է որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, կից ներկայացնելով փաստաթղթերը ուղարկելու վերաբերյալ ծանուցման արտատպումը:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին չպետք է վերագրվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում և խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Արաբկիր և Ավան վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե նշել է lusiareg40@mail.ru:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

www.armeps.am համակարգի միջոցով «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին 10.04.2019թ. ուղարկված ոչ ավտոմատ ծանուցման համաձայն՝ առաջարկվել է ծանուցումը ստանալու

օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի gagik.huroyan@yerevan.am միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում որոշվել է մերժել Մասնակցի հայտը:

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի lusiareg40@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի gagik.huroyan@yerevan.am էլեկտրոնային հասցեին 12.04.2019թ. ուղարկել է PDF ֆորմատի հետևյալ ֆայլերը.

- 20 SU 091 2017

- դիպլոմ

- Մնացական Հակոբի Հակոբյանի նույնականացման քարտ /004189239/ և աշխատանքային գրքույկ

- Արմավիր 3-դպրոց ակտեր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7253-2019 գրությամբ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի.

32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում,

43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/18» ծածկագրով ընթացակարգին մասնակցել է նաև «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

www.armeps.am համակարգի միջոցով 10.04.2019թ. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին ուղարկվել է ոչ ավտոմատ ծանուցման և առաջարկվել է ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում gagik.huroyan@yerevan.am էլեկտրոնային փոստին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի lusiareg40@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի gagik.huroyan@yerevan.am էլեկտրոնային հասցեին 12.04.2019թ. ուղարկել է հետևյալ PDF ֆորմատի հետևյալ ֆայլերը.

- 20 SU 091 2017

- դիպլոմ

- Մնացական Հակոբի Հակոբյանի նույնականացման քարտ /004189239/ և աշխատանքային գրքույկ

- Արմավիր 3-դպրոց ակտեր:

Սակայն գնահատող հանձնաժողովը «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հայտը մերժել է հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ընկերության կողմից գնահատող հանձնաժողովի քարտուղարին 12.04.2019թ. ուղարկված նամակով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ՝

1. «Լուսի-Արեգ» ՍՊԸ կողմից ուղարկված էլ. փոստը վերացական է, հստակ նշում առկա չէ, թե որ ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացվում:

2. Նույնիսկ «Լուսի-Արեգ» ՍՊԸ կողմից ուղարկված PDF տիպի ֆայլերով չի ապացուցվում այն փաստը, որ Ընկերությունը հենց «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն է ներկայացրել:

3. PDF տիպի ֆայլերից նույնպես հնարավոր չէ գալ այն հետևության, որ ուղարկվել է թեկուզ թերի, բայց որակավորման պահանջներին Ընկերության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7253-2019 գրությամբ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**